

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանը հայտարարում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող ՀՀ Շիրակի մարզի <<Շիրակի երկրագիտական թանգարան>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար**

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

1. Պարտադիր պայմաններ՝

- ա) համապատասխան բնագավառի բարձրագույն կրթություն,
- բ) ձեռնարկատիրական կամ կառավարման ոլորտի առնվազն 3 տարվա կամ առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ,
- գ) իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, համապատասխան ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր),
- դ) կազմակերպության զարգացման և բարեփոխման հայեցակարգ, հիմնադրույթներ մշակելու կարողություն,

2. լրացուցիչ պայմաններ՝

- ա) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն,
- բ) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
- գ) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
- դ) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ իմացություն,
- ե) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն,
- զ) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

**3. Մրցույթը կկայանա 2017թ. հոկտեմբերի 17-ին ժամը 11:00-ին, ՀՀ Շիրակի մարզպետարանի շենքում (ք. Գյումրի, Գ.Նժդեհի 16):**

4. Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիները մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնող ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմ են ներկայացնում՝

- ա) դիմում,
- բ) մեկ լուսանկար 3 x 4 չափսի,
- գ) քաղվածք աշխատանքային գրքույկից,
- դ) ինքնակենսագրություն,
- ե) անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև գինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները,
- զ) կադրերի հաշվառման թերթիկ (լրացված),
- է) տեղեկանք մշտական բնակության վայրից,
- ը) հրապարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դրանց առկայության դեպքում,
- թ) բնութագիր վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել):

5. Զաղաքացին մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, ժամը 9:30-12:30, բացի շաբաթ և կիրակի օրերից:

**Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 15.09.2017թ..**

**Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմ (ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16, Անձնակազմի կառավարման բաժին, հեռախոս 0312 4-90-00-156):**